ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2014 թվականի թիվ 165-Ա

ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ « ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի «ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2014թ. դեկտեմբերի 16-ի եզրակացությունը և Ա.Մելքումյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2014 թվականի դեկտեմբերի 20-ից Արմեն Վոլոդյայի Մելքումյանին նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով.միաժամանակ լուծել Ա.Մելքումյանի հետ կնքած 2014թ. հուլիսի 3-ի աշխատանքային պայմանագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2014թ.դեկտեմբերի 19
ք.Իջևան